Արևիկ

Արևիկ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1580.52 հա, բնակչությունը 1785 մարդ: Արևիկ գյուղը գտնվում է մարզկենտրոն Գյումրիից հարավ արևելք, ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Մարզկենտրոնից հեռավորությունը 7 կմ է, մայրաքաղաքից՝ 125 կմ: 1843թ. գյուղը ձեռնամուխ է լինում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը, որը տևում է գրեթե կես դար: Այս գործում մեծ ներդրում ունի արևիկցի բանասեր, հայագետ, թարգմանիչ Բարսեղ Սարգսյանը, որը եղել է Մխիթարյան միաբանության տպարանապետը:Գյուղի ապրուստի հիմնական միջոցներն են հողագործությունը, անասնապահությունը և արտագնա աշխատանքը: Արևիկն ունի նոր շրջանում կառուցված Սբ. Հակոբ մատուռ: Ունի դպրոց, նորակառույց մանկապարտեզ: